ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1, Անգլիայի պետական կազմը և քաղաքական կուսակցութիւնները։ կազմեց Մ. Բարխուդարեան։

Սա մի լաւ, կոմպիլատիւ, աշխատանք է, գրուած մաքուր և հասկանալի հայերէնով, որի նմանը մենք շատ քիչ ունենք մեր դրականութեան մէջ։ Մ. Բարխուդարեանը նախ պատմում է թէ ինչպէս անգլիական ժողովուրդը ձեռք է բերել իր արդի կառավարութեան ձևը և ինչ հիմունքների վերայ է նա հաստատուած։ յետոյ մենք ծանօթանում ենք անգլիական պարլամենտի և քաղաքական կուսակցութիւնների հետ։ Հեղինակը այդ բոլորի մասին տալիս է ամփոփ տեղեկութիւն, առանց մանրամասնութիւնների մէջ ընկնելու։

Պատմական տեսութեան մէջ մենք դարձնում ենք հեղինակի ուշադրութիւնը մի սխալի վրայ՝ Կարլոսը ստորագրեց ոչ թէ «Իրաւունքների օրէնքը» (բիլ օֆ ռայտ), այլ «Իրաւունքների խնդրագիրը» (Փէտիշըն օֆ ռայտ)։ «Իրաւունքների օրէնքը» հրատարակուեց—ինչպէս այդ ասուած է և հեղինակի մօտ (էջ 41) —Վիլհելմի ժամանակ։ Ցանկալի կլինէր նոյնպէս, եթէ հեղինակը մի քանի երես նուիրած լինէր նաև մամուլի, խօսքի և ժողովների ազատութեան վերաբերեալ օրէնքներին, ֆինանսական օրէնսդրութեան, դաղութների իրաւական դրութեան և մի քիչ աւելի ուշք դարձներ տնտեսական հարցերի և երևոյթների վրայ, մանաւանդ պատմական մասում։

Այս բովանդակալից գիրքը մենք առանց տատանուելու յանձնարարում ենք ընթերցողների ամենալայն շրջաններին, մանաւանդ ազգային դպրոցներում ուսանողներին, որոնք դժուարութեամբ են մտրսում այդ տեսակի ռսերէն գրքերը։